ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 02-Ն *11.04.2014թ.*

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի 2014թ. վարչական բյուջեի եկամտային մասում «Աղբահանության վճար» տողի եկամուտի պլանը սահմանել 180 հազ. դրամ:
   2014թ.-ի վարչական բյուջեի ընդամենը եկամուտների ճշտված սահմանել 22 282.5 հազ. դրամ:
2. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 05.1.1. «Աղբահանություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «4213 –կոմունալ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի պլանը ավելացնել 180 հազ. դրամով,4213 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 935 հազ. դրամ:
3. Համայնքի վարչական բյուջեի ընդամենը ծախսերի ճշտված պլանը սահմանել 22 282.5 հազ.դրամ:
4. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 11.1.2 «Պահուստային ֆոնդ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «4891 – պահուստային միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 100 հազ. դրամով,4891 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 757.5 հազ. դրամ:
5. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 01.1.1. «Կառավարման ապարատ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրում ավելացնել «4235-իրավաբանական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդված:4235 հոդվածի ծախսի պլանը սահմանել 100 հազ. դրամ:
6. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.1.1. «Կառավարման ապարատ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 300 հազ. դրամով, «5122-վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 600 հազ. դրամով, «5134-նախագծա-հետազոտական աշխատանքներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 30 հազ. դրամով:
   Ֆոնդային բյուջեում 01.1.1. «Կառավարման ապարատ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրով ծախս չպլանավորել:
7. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 08.2.3 «Մշակույթի տներ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 990 հազ. դրամով, «5134-նախագծա-հետազոտական աշխատանքներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 50 հազ. դրամով:
   Ֆոնդային բյուջեում 08.2.3 «Մշակույթի տներ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրով ծախս չպլանավորել:

8. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 06.4.1. «Արտաքին լուսավորություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը ավելացնել 1040 հազ. դրամով, 5112 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 7930.336 հազ. դրամ:
9. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 06.4.1. «Արտաքին լուսավորություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5134-նախագծա-հետազոտական աշխատանքներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը ավելացնել 200 հազ. դրամով, 5134 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 300 հազ. դրամ:
10. Համայնքի ֆոնդային բյուջեում ավելացնել 09.8.1. «Նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագիր: 09.8.1. «Նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը սահմանել 700 հազ. դրամ, «5134-նախագծա-հետազոտական աշխատանքներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը սահմանել 30 հազ. դրամ:

Ավագանու անդամներ

1. _____ (ստորագրություն) Արտակ Մարգարյան
2. _____ (ստորագրություն) Ավետիք Մայիլյան
4. _____ (ստորագրություն) Հրահատ Գրիգորյան

Դեմ - 0, ձեռնպահ - 0

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ (ստորագրություն) Է.ՍԱՀԱԿՅԱՆ